

Պտղնավանք

Վանքը կառուցել է Մանուել Ամատունի իշխանը VI դ. վերջինս VIIդ. սկզբին: Եկեղեցին իր չափսերով շատ մեծ է և հարուստ ճարտարապետական առանձնահատկություններով:

Եկեղեցին ունի բուսական ու երկրաչափական զարդաքանդակներով ու պատկերաքանդակներով հարուստ հարդարանք: Եզակի է սափորների քանդակաշարով քիվր: Հարավային շքամուտքի կամարի կենտրոնում Աստվածածնի պատկերաքանդակն է՝ երկու կողմերում հրեշտակներով: Քանդակից աջ և ձախ երեքական առաքյալների դիմաքանդակներն են. մյուս վեցը հավանաբար եղել են արևմտյան շքամուտքի վրա:

Հարավային մուտքի զարդակամարի ձախ՝ հորիզոնական մասին առյուծին նետահարող, քառատրոփ սլացող ձի հեծած Մանուել Ամատունու քանդակն է: Զարդակամարի աջ կողմում՝ առյուծի հետ նիզակով մենամարտող Սահակ Ամատունին է՝ Մանուելի որդին:

Հյուսիսային ճակատի լուսամուտների կամարակալներին մեծ վարպետությամբ, իրենց բնորոշ շարժման մեջ պատկերված են զանազան թռչուններ: Ուշագրավ է արմավենու տակ նստած առյուծի քանդակը:

Պտղնավանքի պատկերաքանդակները վաղ միջնադարի հայկական արվեստի արժեքավոր և ինքնատիպ ստեղծագործություններից են:

